

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1  
ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Խորհրդի  
2012թ.-ի փետրվարի «27» -ի  
թիվ 06/03 Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝  
Բարսեղ Բեգլարյան \_\_\_\_\_

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ** 

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՇԱՀԱԲԱԺՆԱՅԻՆ**

**Ուժի մեջ է՝ 2012թ.-ի փետրվարի «27»-ից**

## 1. Ընդհանուր դրույթներ

1. Շահաբաժնային քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի շահաբաժինների վճարման սկզբունքները, նպատակները, սահմանաչափերը, դեպքերը և կարգը:

2. Քաղաքականությունը մշակված է ՀՀ օրենսդրության՝ «Բանկերի և բանկային գործունեության», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

3. Քաղաքականությունում ամրագրված դրույթները Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից չպետք է ընկալել որպես շահաբաժինների վճարման երաշխավորում:

4. Քաղաքականության նպատակն է՝

ա) շահաբաժինների վճարման և չափի որոշման դեպքում ապահովել Բանկի և իր բաժնետերերի համար ընդունելի եկամուտների մակարդակ,

բ) շահութաբերության այն մակարդակի ձևավորումը, որը թույլ կտա Բանկին ընդլայնել իր գործունեությունը և ապահովելով մրցակցություն,

գ) Բանկի ընթացիկ ներդրումային գրավչության բարձրացումը և կապիտալի շարունակական աճի ապահովումը,

դ) Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված համապատասխան ցուցանիշների ապահովումը:

## 2. Շահաբաժինների բաշխում և որոշումների ընդունում

5. Բանկի Խորհուրդը որոշում է ընդունում (հայտարարում) իր մասնակիցներին տարեկան շահաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Քաղաքականությամբ և Բանկի կանոնադրությամբ:

6. Տարեկան շահաբաժինների վճարման չափը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալի 20 տոկոսը՝ հաշվի առնելով սույն Քաղաքականության 14-րդ կետով սահմանված սահմանափակումները:

7. Բանկի վարչությունը Բանկի խորհրդին ներկայացնում է հիմնավորումներ, հաշվարկներ և առաջարկություններ տարեկան շահաբաժինների վճարման մասին:

8. Տարեկան շահաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

9. Տարեկան շահաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմում է Բանկի խորհուրդը:

10. Տարեկան շահաբաժնի վճարման ցուցակում ընդգրկվում են Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

11. Տարեկան շահաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Ընդհանուր ժողովի՝ շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ շահաբաժինները կարող են կուտակվել և վճարվել մեկ տարվա ընթացքում:

### **3. Շահաբաժինների վճարումը**

12. Շահաբաժինները վճարվում են համաձայն Բանկի վարչության կողմից հաստատված «Շահաբաժինների վճարման» ընթացակարգի, եթե այլ բան նախատեսված չէ շահաբաժիններ վճարելու մասին Ընդհանուր ժողովի որոշմամբ:

13. Բանկի բաժնետերը բանկային հաշվին մուտքագրված շահաբաժնի գումարը կարող է տնօրինել կանխիկ կամ անկանխիկ: Ընդ որում, շահաբաժնի գումարի կանխիկացման և այդ բանկային հաշվի բացման ու սպասարկման համար վճար Բանկը չի սահմանում:

### **4. Շահաբաժինների վճարման սահմանափակումները**

14. Բանկի բաժնետերերին տարեկան շահաբաժինների վճարումն արգելվում է, եթե՝

ա) Բանկը բաժնետիրոջ պահանջով և ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, այն դեպքում երբ.

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

բ) շահաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

դ) լրիվ չի վճարվել բանկի կանոնադրական կապիտալը,

ե) շահաբաժին վճարելու դեպքում կխախտվի ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական գործունեության որևէ նորմատիվ:

### **5. Քաղաքականության իրականացման հսկողությունը**

15. Քաղաքականության կատարման ընդհանուր հսկողությունն իրականացնում է Բանկի Խորհրդին կից Կորպորատիվ կառավարման և անձնակազմի կառավարման հանձնաժողովը: